Արիոսացի: Որ և բազում հալածանս յարոյց ուղղափառաց, և զամենայն եկեղեցիս յանձնեաց չարափառացն: Յաւուրս սորա երևեցաւ խաչն լուսեղէն 'ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, 'ի Հայրապետութեան մեծին Կիւրղի, որ գրեաց զպատճէնն առ Կոստանդին, բայց ոչ հաւատաց. և գնաց 'ի Պարս 'ի պատերազմ: Իսկ Աթանաս դարձաւ յաքսորանացն. յայսմ ժամանակի Անտօն Ճգնաւորն ՃԵ. ամաց վախճանեցաւ 'ի Թեբայիդ: Իսկ երբ դարձաւ Կոստանդին 'ի պատերազմէն և մուտ յեկեղեցին Արիոսաց և հայհոյեաց զՔրիստոս, և որ առժամայն հերձեալ պատառեցաւ փոր նորա և աղիքն հեղեալ սատակեցաւ չար մահուամբ և կորեաւ 'ի կենաց:

Յուլիանոս ուրացողն սկսաւ յամի Տեառն ՅԿԱ. ինքնակալեալ ամս Բ. և ամիս Ը: Սա որդի գոլով եղբօրն Կոստանդիանոսի մեծի, որ մեռաւ, մնալով Յուլիանոս մանուկ մատաղ, և անուն հօ-

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան